

ՄԱՍԻՍ

Շ Ա Ւ Ա Ռ Ա Ռ Ե Ր Ր

Ազգային, Գրական, Քաղաքական, Գիտական,

54^{րդ} ՏԱՐԻ, Ե. ՇՐՋԱՆ

ԹԻ 27

3 ՅՈՒԼԻՍ 1904

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

ՄԱՆ ԿԱՐԱՊԵՏ ԷՖ. ԻԹԻԻՆՍԿԻ

Կես-բժշկական. «Մաքուրեան պէտք» ՏՕՔԹ. ՅՈՎՍ. Տ. ՍՅԵՓԱՆԵԱՆ. — Մոլորանք (Նորակայ) Շ. ՇԱԻԱՐՇ. — Աղջկան մը օրագիրէն քաղուած. ՄԱՌԻ ՅՈՎՀԱՆՆԷՍԵԱՆ. — Խմբագրական Նօթեր. — Ինքնամփոփում (Բանաստեղծութիւն) Մ. Ա. ՊԱՐՍԱՄԵԱՆ. — Զանազանք.

Բ Ա Ժ Ա Ն Ո Ր Դ Ա Գ Ր Ո Ւ Թ Ի Ի Ն

ՄԱՍԻՍ Շաբաթների օրական բաժանորդագիրն է Կ. Պոլսոյ համար ԲԱՌԱՍԻՍ դրոշմով գաւառներուն համար յիսուն դրոշմ, կանխիկ վճարելի: Արտատպագրութեան 12 Ժրանք կամ 3 րուպի: Թղթաստրական ծախքը Խմբագրութեան վրայ է: Վեցամսեայ բաժանորդագրութիւն չընդունուիր: Բաժանորդագրութիւնները կը սկսին ամէն ամսոյ մէկին: ՄԱՍԻՍ ճրագարակ կ'ելլէ ամէն շաբաթ առտո: Այն բաժանորդները որոնք պակաս քերք ստացած են, պէտք է իսկոյն իմացնեն Խմբագրութեան: Ժամանակ անցնելէ վերջ՝ այս տեսակ առարկութիւնները ցկատողութեան չեն առնուիր:

Զի ճրագարակուած ձեռագիրները ետ չեն դարձուիր:

ՄԱՍԻՍԻ մէջ կ'ընդունուին նաեւ ծանուցումներ, դիւրամասշտիկ պայմաններով:

Զեմ-Բէ ԿՐ ԾԱԽՈՒԻ ՀԱՏԸ ԲԱՌԱՍԻՍ ՓԱՐԱՅԻ
Հասցէ

در علیاده غلطاده (ماسيس) غرضه سی اداره سی

ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆ ՄԱՍԻՍԻ

Կ. Պոլիս, Հալաքիս

Rédaction de la Revue MASSIS

Galata, Constantinople

UNIVERSITY OF CHICAGO

THE UNIVERSITY OF CHICAGO

LIBRARY OF THE UNIVERSITY OF CHICAGO

3001 URBAN 3 2001 1804

UNIVERSITY OF CHICAGO

UNIVERSITY OF CHICAGO

UNIVERSITY OF CHICAGO

UNIVERSITY OF CHICAGO

UNIVERSITY OF CHICAGO

UNIVERSITY OF CHICAGO

UNIVERSITY OF CHICAGO

UNIVERSITY OF CHICAGO

UNIVERSITY OF CHICAGO

UNIVERSITY OF CHICAGO

UNIVERSITY OF CHICAGO

UNIVERSITY OF CHICAGO

ՄԱՍԻՍ

54^ր ՏԱՐԻ, Ե. ՇՐՋԱՆ

ՔԻՒ 27

3 ՅՈՒԼԻՍ 1904

ՄԱՅ

ԿԱՐԱՊԵՏ ԷՖ. ԻԻԹԻԻՃԵԱՆԻ
ՀԻՄՆԱԴԻՐ-ԱՐՏՕՆԱՏԷՐ “ՄԱՍԻՍ”

Լրագրոյս բաղմամբաստակ և ծերունաղարդ Հիմնադիր—Արտոնատէրը, Կարապետ Էֆ. Իւթիւճեան, կարճատե՛ բայց տաժանելի հիւանդութենէ մը ետք իր հոգին աւանդեց յունիս 27ի կիրակի իրիկունը, շրջապատուած իր կնոջմէն ու զաւկներէն որոնց ընտանեկան խնամքները ինչպէս նաև բժշկական ճարտար-դարմաններ անգոր եղան կասեցնելու զինքը տառապեցնող անողոր ակտը:

Խորին ցաւով արձանագրելով հայ լրագրապետներու նահապետին մահը, մեր աւագ պարտականութիւնը կը համարինք երախտագիտութիւն մատուցանել կայսերական Կառավարութեան բարեհաճ արտօնութեան համար, որուն շնորհիւ Մասիս կը շարունակէ հրատարակուիլ, ինչպէս 54 տարուան գոյութիւն մը ունեցած է՝ իբրև ուղղամիտ թերթ, միշտ հաւատարիմ Տէրութեան ու ծառայող երկրին շահուց: Իւթիւճեան Կարապետ Էֆ. ան արժանացած էր Ն. Կ. Վեհափառութեան բարձր գնահատման, պատուուելով Գ. կարգի Մէճիտիյէ պատուանշանով որ շնորհուեցաւ իրեն անցեալ տարի: Մասիսի Տնօրէնութիւնն ու Խմբագրութիւնը, հետեւող անոր Հիմնադրին սկզբանց և ուղղութեան, կը շարունակեն այս բաղմամեայ թերթը վարել նոյն պատուաւորութեամբ ու յարատեւութեամբ, որոնց հաւաստիքն ընծայելով հրապարակաւ՝ կը կրկնեն իրենց բարեմաղթութիւնները Օգոստոսիս և Կրթասէր Վեհապետին արեւշատութեանը համար, ու կը

յայտնեն իրենց շնորհակալիքը ներքին գործոց նախարար Բարձր. Մէմուէն փաշայի և Տպագրական Վերատեսուչ Վսեմ. Հըֆզի պէյի:

Ս. Պատրիարք Հայրը կիրակի գիշեր իմանալով Իւթիւճեան Էֆ. ի մահը, ցաւակցութիւն յայտնել տուած էր անոր սգաւոր ընտանիքին, ինքնաբեր պատրաստակամութիւն յայտնելով թէ ինք անձամբ պիտի նախագահէ յուղարկաւորութեան և պիտի խօսի դամբանականը, պատուելու համար հանգուցելոյն յիշատակը:

Երկուշաբթի, առաւօտէն, գոյժը տաւածուած էր արդէն Բերայի մէջ և մինչև իրիկուն իմացուեցաւ մայրաքաղաքիս ամէն կողմը՝ Վեր ցերեկուան թերթերը հրատարակեցին զայն, բայց ի հայերէններէն՝ Փրանսերէններն ու յունարէններն ալ, ցաւակցական սողերով ու համակիր զգացմանց արտայայտութիւններով: Նոյնպէս, երեքշաբթի, արշալոյսին հրատարակուող հայերէն և թուրքերէն օրաթերթերը: Չորս ազգ. թերթեր հրատարակեցին նաև հանգուցելոյն պատկերը: Այնպէս որ, ո՛չ միայն հայ համայնքին, այլև օտար շրջանակներու մէջ՝ օրուան խօսակցութեան նիւթն էր բաղմարդիւն և հանրածանօթ լրագրապետին մահը, ութսունը մէկ տարեկան հասակին մէջ:

Երեքշաբթի առաւօտ, Բերայի Ս. Երրորդութիւն եկեղեցին լեցուած էր յուղարկա-

ւորներու խումուն բազմութեամբ մը, որոնց առաջին կարգին վրայ կը դնուէին պետական հոյ պաշտօնատարներ, բժիշկներ, վաճառականներ, լրագրագետներ, Պատրիարքարանի ժողովականներ ու գլխաւոր պաշտօնէութիւնը, և ժողովրդեան զանազան դասակարգի ներկայացուցիչներ՝ սառւարթիւով մը: Յիշենք, որքան որ հնար է, ներկայ ծանօթ անձնաւորութիւնները. —

Վսեմ. Աքիկ Ունճեան, Գարբիէլ Նորատունկեան, Զարեհ Տիւպէր, Ռօպէր Եաղըճեան էֆէնտիները: Ոստիկանութեան Դրանթարգման Ապտ-իւլ-Քէրիմ փաշա, Տօքթ. Նաֆիլեան փաշա, Տօքթ. Պապական փաշա, Տօքթ. Վահրամ Թորգոմեան, Վահան Էսաեան, Միհրան Սէթեան, Ռէթէոս Պէրպէրեան, Յակոբ Էսաեան, Տօքթ. Կոմիտաս Օրմանեան, Նշան Զիւլանեան, Պապի Պապօեան, Աղեքս. Փանոսեան, Ծաննի պէյ, Տօքթ. Շէրպէթեան, Աւետիս Սուրէնեան, Դրիգոր Կիւմիւշկէրտան, Տպագրական Տեսչութեան պաշտօնատարներէն Տպարաններու ընդհ. քննիչ Վսեմ. Սիսակ Ֆէրիտ, Հայ Թերթերու գրաքննիչներէն Երուանդ Եոսուֆեան, Պատրիարքարանի Ա. գործակատար Արիս Ֆէսճեան, Բարթող Թէլեան, Մկրտիչ Մեւլիթեան, Մկրտիչ Մեղպուրեան, Պետրոս Կարապետեան, Խաչիկ և Զգօն Խօրասանճեան, Միհրան Տէր-Ներսէսեան, Անտօն Թարադ, Գասպար Թօքթեան, Գրիգոր Քըրքճեան, Նազարէթ Խաչէրեան, Սիմօն Գաբամաճեան, Գարեգին Պաղտատեան, Միհրդատ և Միքայէլ Նորատունկեան, Բիւզանդ Քէչեան, Յովհ. Գոյսէրեան, Տիգրան Զիւլէլէկեան, Էտուար պէյ Մըսըրը, Տիգրան Ումէտեան, Մարկոս Նաթանեան, Միքայէլ Կիւլլապեան, Պօղոս Քէրէստէճեան, Դրիգոր Ոսկեան, Յակոբ Լուս-Պարոնեան, Հ. Ասատուր, Պ. Պալենց էֆէնտիները, Պօլսահայ լրագրիներու և պարբերականներու խմբագիրներ, գրագէտներ, ուսուցիչներ և այլն:

Յուդարկաւորներու այս պատկառելի բազմութեան ներկայութիւնը՝ դազաղի մը շուրջ որ հարուստի մը դազաղը չէր, այլ մտաւորական կեանքի ներկայացուցիչ մը և

գրչի բազմամեայ վաստակաւորի մը, ինքնին ցոյց կուտար համակրանքը և գնահատումը զոր կը վայելէր Խթիւճեան էֆ.ն՝ ընդհանուր կերպով:

Ժամը Ձուկէսին եկեղեցի մտաւ Օրմանեան Ս. Պատրիարք Հայրը և նախագահեց արարողութեանց, իր շուրջն ունենալով Տ. Բարթողիմէոս, Տ. Հմայեակ, Տ. Գէորգ Երէցեան և Տ. Մկրտիչ Վեհապետեան Սըրբազաններն ու բազմաթիւ վարդապետներ և քահանաներ: Հոգեհանգստեան շարականներու երգեցողութիւնք կատարուեցան դաշն և հանդիսաւոր կերպով, որոնցմէ ետք Ս. Պատրիարքը խօսեցաւ պերճիմաստ դամբանական մը, յայտնապէս ներշնչուած ու զգածուած, որ խորունկ տպաւորութիւն մը թողուց բոլոր ունկնդիրներուն վրայ:

Ն. Ամենապատուութիւնը իրեն բնաբան առնելով Սողոմոնի խօսք, «Դադար իմաստութեան ցանկալի է քան զոսկի, դադար հանճարոյ ցանկալի է քան զարծաթ» մասնաւորեց դաշն հանգուցելոյն վրայ որ, ըսաւ, իր հարստութեամբը և նիւթական կարողութիւններովը չէ որ կը փայլէր, այլ կը փառաւորուի բոնով մը՝ որ աւելի վեր է քան արծաթն ու ոսկին: Մտաւորական մըն էր ան, մտքի գործիչը, որ բարերար մըն է է իր կարգին, ինչպէս բարերար կը նկատուին եկեղեցի, դպրոց և հիւանդանոց շինողները: Իր ուսանողութեան չըջանը լրացնելէ ետքը, երբ 30 տարեկան էր արդէն, Խթիւճեան ինքզինքը նուիրեց մեր մտաւոր գորդացման և կրթութեան գործին, որուն նպաստեց գործունէութեան ամէն եղանակներով, իբր ուսուցիչ, իբր լրագրագետ, իբր ժողովական, իբր կրթական տեսուչ՝ մասնակցելով ամէն կրթական ձեռնարկներուն: Խթիւճեան մասնաւոր ամէնէն մեծ հարստութիւնն է որ կը ձգէ, շնչոյց Ս. Պատրիարքը, աշխատելով լեզուին կանոնաւորման, խօսուած լեզուն գրականին մօտեցնելով և հասցնելով դաշն վիճակի մը որ կարենայ մեր զարգացման միջոց մը ըլլալ: Եւ այս ուղղութեամբ մեր Ն. դարու Թարգմանիչներուն մէկ նոր գործը կատարած եղաւ: Լրագրութեան մէջ

սկսաւ իր գործունէութիւնը. և հոն վերջացուց, հայ թէ օտար լրագրողներու նահապետը հանդիսանալով: Ս. Պատրիարքը ապա լրագրութեան դերը ի վեր հանեց զոր իբր դպրոց մը դաւանեցաւ, և ղրուատեց հանգուցեալին խոհականութիւնը՝ իր արուեստին մէջ: Իւթիւճեան գիտցաւ ճանչնալ Պետութեան, եկեղեցիին, Ազգին շահերը. և այսպէսով հանդիսացաւ հաւատարիմ իր Պետութեան և սոհմասէր: Ս. Պատրիարքը վերջացուց իր դամբանականը՝ մաղթելով որ մեր մէջէն անպակաս ըլլան մօքի արդիւնաւոր գործիչները, և օրհնեց հանգուցեալին յիշատակը, երկնային միութարութիւն հայցելով անոր ընտանեաց և զաւկներուն:

Պատրիարքական դամբանականէն ետքը, որուն վրայ շատ տկար գաղափար մը պիտի տայ այս ամփոփումը, դաճաղը հանդիսաւոր թափօրով դուրս հանուեցաւ տաճարէն՝ նախագահութեամբ Ս. Պատրիարք Հօր և առաջնորդուեցաւ մինչև եկեղեցւոյ քովընտի դուռը: Մոպերը բռնած էին, Տեարք՝ Ռէթէոս, Պէրպէրեան, Մկրտիչ Մեղպուրեան, Ազեքսանդր Փանոսեան, Գարեգին Պաղտատեան, Աւետիս Սուրէնեան և Ս. Թղլեհան: Իսկ կերմները կը կրէին, Տեարք՝ Արամ Անտօնեան, Դրիգոր Մարգարեան, Դառնիկ Բարունակեան, Սմբատ Դաւթեան, Ենովք Արմէն և Հրաւտ Մարգարեան:

Եկեղեցւոյ բակին մէջ, ներկայ յուղարկաւորները՝ եկեղեցական և աշխարհական՝ իրենց ցաւակցութիւնները յայտնեցին Իւթիւճեան էֆ.ի որդւոյն՝ Տօքթ. Եղուարդ Մասիսի և Մասիսի խճագրապետին որոնք սգակիր էին: Յետոյ, դաճաղը մեռելակիր կառքով փոխադրուեցաւ Շիշլիի ազգ. գերեզմանատունը ուր կառքերով հետեւեցան անոր՝ մօերիմ բարեկամներ, բիշկներ, գրագէտներ, լրագրապետներ: Վերջին Հոգւոցը կարգաց Տ. Մկրեան Հայրը, տաներէցը ու վաղեմի բարեկամը Իւթիւճեան էֆ.ի որուն ծիւրած ու ծերացած մարմինը ամփոփուեցաւ փոսին մէջ ու ծածկուեցաւ հողակոյտով, իր յարգելի ու սիրելի յիշատակը միայն թողլով, և յուղարկաւորները մեկնեցան գերեզ-

մանատունէն՝ խորապէս տխրազդեցիկ տըպաւ որութեան մը տակ:

Այրի Տիկին Ի. Կ. Իւթիւճեան և իր զաւակները՝ Տօքթ. Եղուարդ Մասիս և Օրիորդ Իւթիւճեան, ինչպէս նաև Մասիսի խճագրուութիւնը, հրապարակաւ իրենց խորին շնորհակալութիւնը կը յայտնեն Ամեն. Ս. Պատրիարք Հօր որ բարեհաճեցաւ նախագահել ողբադեալ ԿԱՐԱՊԵՏ ԷՖ. ԻԻԹԻՃԵԱՆԻ յուղարկաւորութեան: Նոյնպէս շնորհակալութիւն եպիսկոպոսական դասուն, լրագրապետներուն և ամէն այն յուղարկաւոր Տեարք՝ որոնք հաճեցան պատուել հանգուցելոյն յիշատակը և իրենց ցաւակցական զգացմանց հաւաստիքը տուին այս տխուր առթիւ:

Ոչ նուազ խորին ու անկեղծ շնորհակալութիւն բոլոր ազգ. թերթերուն, որոնք երկուշաբթիէն ի վեր իրենց էջերը բացած են իրենց երիցագոյն պաշտօնակցին գրչի գործունէութեանը նուիրուած յօդուածներու և կենսագրականներու, խմբագրութեանց կողմէ արտայայտուած համակիր ցաւակցութիւններէն և յուղարկաւորութեան նկարագրութիւններէն զատ: Նոյնպէս, շնորհակալութիւն թուրքերէն, ֆրանսերէն և յունարէն օրաթերթերուն որոնք զնահատական տողերով ծանուցին Իւթիւճեան էֆ.ի մահը և վշտակցութիւն յայտնեցին:

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ

Թեեւ հարկ եր ու ՄԱՍԻՍԻ ներկայ քիւր ամբողջովին նուիրեմք Թերթին ողբացեալ հիմնադիր-արտօնաբերոյ յեւսակին ու գրական-լրագրական գործունեութեանը, բայց իւրիւնեան հեֆ.ի մահուան պատճառած թիւ. բուքիւնն ու յուզումը՝ ինչպէս իր Ընտանիքին նոյնպէս խմբագրութեան, յուղարկաւորութիւնն ու քաղումը եւ յարակից պարագաներ՝ պէտք եղած լայն ժամանակը բողած չըլլալով այդ աշխատութեան համար. յաջորդ քիւր մը կը վերապահենք այս պարտականութեան կատարումը, ու ՄԱՍԻՍԻ կը հրատարակենք իր օրին եւ իր սովորական նիւթերով:

ՄՈԼՈՐԱՆՔ

(ՆՈՐԱՎԷՊ)

Թ. 3.

2.

Դրնալը կղզին շատ դժուարութիւն կրեց նաւակ մը գտնելու համար. վերջապէս ծերուկ մը որ զինքը կը ճանչնար շատոնց եւ գիտէր իրեն քաջ թիավար մը ըլլալը, յանձն առաւ զինքը դիմաց անցընել խոշոր վարձատրութեան մը խոստումէն չլացած. բայց միանգամայն զգուշացուց զինքը օդի փոփոխութեան դէմ, որ հաւանական էր: Սուրբէն արգահատանքի ժպիտ մը ունեցաւ մտածելով այդ ծերուկին վախին՝ մահուան հեռապատկերին հանդէպ, երբ ինք որոշած էր արդէն անոր դիմել. ու գաղտնաբար մազթեց որ փոթորիկ մը փրթէր զինքը ընկուզելու համար, իրմէ վերցնելու համար անձնասպանութեան եղանակին հոգը:

Մակոյկին մէջ բաւական ժամանակ անոր վրայ մտածեց, կրկին ունեցաւ ցաւը բնութիւնը պէտք եղածին չափ սիրած չըլլալուն: Կղզիներէն բաւական հեռացած էին արդէն. յետադարձ ակնարկով մը ուղեց անոնց պատկերը տանիլ իր հետ. հսկայ ուղտերու սապատներու պէս ծովուն մէջ կը ցցուէին անոնք քով քովի, վերջալոյսին մէջ լերկ անբնակ երեւոյթով, այդ ջուրերու անկայուն ու նենգաւոր տարածութեան մէջ հաստատուն վստահելի հանգրուաններ, ուր կարծես ապահովաբար մարդ պիտի գտնէր մենութիւն, անդորրութիւն, երջանկութիւն: Դիմացը թեթեւ մշուշի շղարչին մէջէն Փանառաքի լեզուն ու փարոսը, ու աւելի վար Գալամիշ եւ Մօտա, ընտանի վայրեր սակայն, որոնք, հոռիէ անծանօթ գեղանկարներու տեսքը ունէին: Շատ աւելի անդին, տարտամ ուրուադիժը Պոլսոյ վերասլաց ճարտարապետութեանը, նոսր և կարծես դիւրաբեկ գեղեցկութեան մը մէջ, կրկին հին ատեններու վերջուլումը ունեցաւ որ թելադրի իրականութիւն մը ստացաւ քիչ

մը հեռուն սե մեծկակ բեռան նաւու մը տեսքովը. երեք զոյգ թիւրու առջև վեց հոգի, ոտքի կեցած, մարմնոյ ներդաշնակ շարժումներով կը ճգնէին շարժել ծանրաբեռնեալ նաւը: Սուրէնի երեւակայութիւնը տնտնաց հին դէպքերու վրայ, Յոյներու առեւտրի նաւերուն ու հռոմէական քրիստոնէութեան տեսիլքը ունեցաւ. նոյն ժեսթերը ունեցած ըլլալու էին անոնց ալ թիավարները, թիւրու նոյն կծկումը, «հահայներու նոյն լեշտը, նոյն վախերը ծովէն, նոյն յոյզերը ու յոյսերը. — կեանքի տեւականութեան անաղ-դեցիկ խորհուրդը, այնչափ անգամ յեղեղուած մեկնուած, հասարակ տեղիք մը դարձած, անսովոր նշանակութիւն մը ստացաւ իր աչքին. «հաղտը տարիէն ամէն բան միեւնոյնը պիտի մնայ. մեր տեղ ուրիշներ պիտի գան...» և յիմար ու անտեղի գտաւ այն յարգը զոր կեանքը ունէր մեզ համար:

Ջուրերուն վրայ սարսուռ մը նաւավարին վախ մը աղդեց. «Հով կիւնէ կոր» ըսաւ:

Մութը կոխած էր արդէն. Սուրէն կրցաւ տեսնել սակայն ջուրերու մակերեսին փոթփոթիլը. նաւավարը խնդրեց որ ինքն ալ թիավարէ ժամ առաջ հասնելու համար. Սուրէն առաջարկին խուլ մնաց:

«Ընկղմիլ, խղղուիլ, ոչնչանալ» մրմռաց:

Պոլսոյ խորերէն հովը կը սաստկանար արագօրէն. ջուրերու խորումները կը մեծնային, ճեղքերու, ակօսներու, խրամատներու կը փոխուէին. սպիտակ փրփուրներ մակոյկին վրայէն ձաղկեցին Սուրէնին երեսը. թեթեւ նաւակը ջուրերուն վրայ կ'ստոտոտէր, կը սուզէր, կը բարձրանար, առանց սակայն մեծ ճամբայ մը կտրելու. խեղճ ծերուկը ի դուր կը ջանար ճեղքել ջուրերը, դէմ դնել հավուն. մութին մէջ փոթորիկը կ'ոռնար, Սուրէնի թուեցաւ որ դիւային քահաաններ էին որ կ'արձագանգուէին աջամուղջի գըմ-

թէթներէն՝ ի տես այդ ծիծաղելիօրէն անհամեմատ կռիւին :

«Պիտի ընկզմինք, պիտի կորսուինք» հեծեց ծերուկը :

Ու վախ մը մտաւ Սուրէնի սրտին մէջ ալ. չէր կրնար խորհիլ, տրամաբանել. բռնազորօրէն վտանգ մը կը նախազգար, ու այդ վտանգի հաւանականութիւնը վախ կուտար. ի զուր շուրթները կը շարժէին, կը մրմռային. «ընկզմիլ, խղիւղիլ, ոչնչանալ...» ներքնապէս դող մը ունէր. սակայն վայրկեան մին ալ ուզեց դիմադրել : Լաւագոյն չէր նոյն պահուն իսկ զոհ երթալ արկածի մը քան թէ հետեւեալ օրը, պաղարիւնութեամբ նոյն արդիւնքին հասնելու համար ձեռնարկներ ընել : Բայց ծերուկին ողորդ խղճին կոչում ըրաւ.

«Բնամանիքի տէր եմ, կ'ըսէր, օգնէ՛ ինծի, սա փորձանքէն ազատինք...» :

Յիշեց իր իսկ մտատանջութիւնը պահ մը առաջ : «Հայրս, մայրս, քոյրս...» : Յիշեց Բիւզանդ աղայի հեծկոտութիւնը «Օլուխս, չօճուխըս, կնիկս...» ու զգաց թէ պարտքն էր աղատել այս մարդը, որ իրեն համար յանձն առած էր վտանգել կեանք մը որ նեցուկն է եղբոր ընտանիքի մը. գոնէ այդպէս մտածել կարծեց :

Շուտով անցաւ թիբրուն երկրորդ զոյգին գլուխը. ջուրի զանգուածներ հիմայ կրնակն ի վար կը հոսէին. մութին մէջ չէր կրնար բան մը զանազանել. երկնքի երեսն անգամ, որ սակայն անամպ մնացած էր, լոյսերը չկրցաւ նշմարել : Շատոնց վարժութենէ զուրկ թեւերը դժուարութիւն կրեցին թիբը կանոնաւորելու. յաճախ ասոնք ջուրի կոհակներուն վրայէն կը սահէին առանց ճեղքելու զանոնք. երբեմն մին աւելի ուժով կը սուզէր քան թէ միւսը, չեզոքացնելով հարաւածին թափը. բայց Սուրէն դնդերները պրկեց և հուժկու հարուածներով նոր սլացք մը տուաւ նաւակին. զգաց թէ դողահար նաւավարին ջանքերը մեծ օգուտ մը. չունէին իրեն, թէ ինքն էր որ՝ մինակ՝ կը կռուէր փոթորկին դէմ, կատաղած տարրերու դէմ սպառած կոտորվը կը կեդրոնացնէր իր մտային գործու-

նէութիւնը. վախը հեռացած էր իրմէ, ու գոհունակութիւնը ունէր մաքառելու կոյր, յամառ ու անհուն ոյժերու դէմ. գոհունակութենէ աւելի բան մը, հրճուանք մը, հեշտանք մը, արբուութիւն մը, ամէն անգամ որ մակոյկը դէպ ի առաջ ոստումը կ'ընէր, Սուրէնի կը թուէր թէ գերմարդկային գործ մը կատարած էր. յաղթանակին ետեւէն հետապնդումին մէջ ամէն հոգ մոռցած էր... :

Երբ վերջապէս կրկին ինքզինքը Մոտայի խորշը նետեց ու գետին ոտք կոխեց, Սուրէն մտածեց վտանգին, պայքարին ու յաղթանակին, ու անսահման երանութիւն մը զգաց :

«Իմ թեւերովս, իմ դնդերներովս, իմ կամքովս...» մոլտաց արհամարհանքի ակնարկով մը դէպի ծովը. ինքզինքին հսկայ մը երեւցաւ. պիտի ուզէր բարձր աղաղակներ արձակել, դուռը յաղթական երգ մը գոչալ : Բայց հազիւ թէ կռնակը դարձուց ծովուն հաղիւ տուն երթալու համար սկսաւ քալել. ներկան պաշարեց միտքը կրկին. վայրկեան մը առաջուան խանդոտ յափշտակութիւնը անդնդային ընկճումի մը տեղի տուաւ, անխուսափելի ելքը աչքին առջև պատկերացաւ՝ ուրուականի մը պէս :

Մեռնելու էր, ճարը չկար :

Սուրէն երկու գինովներ լաքեռնայի մը կը հետեւէին յունարէն երգ մը թնդացնելով, կազի մը լոյսին առջև Սուրէնի աչքին երեւաց երգահոնին ճակատը գտնուած լկտի ժպիտով, մերկալանջ կնկան մը գունաւոր պատկերը. այդ երկու գինովներու հոգեբանութիւնը ուզեց ընել ու չյաջողեցաւ. «Մարդիկ կան որոնք գինիի կամ սիրոյ մէջ կը խղդեն ամէն վիշտ» ըսաւ, ու երազեց Հռոմէական շուայտութիւններ որոնց մէջ պիտի մոռնար ամէն բան, բայց միտքը չկրցաւ խուսափիլ իր հոգեբէն :

«Մեռնելու է, ճար չկայ» կ'մկմաց դարձեալ : «Ու քաջութիւն մըն ալ աս է» աւելցուց խորխտաբար. այն կեանքը զոր արտաքին կամք մը ստեղծած էր, և զոր նոյն արտաքին ոյժը հալածած էր կատաղաբար, ինք իր ձեռքովը պիտի խեղդէր, պիտի մարէր :

Իճէ իր ձեռքովը . . . :

Ի .

Առաջին այցը մօրը եղաւ, իր հիւանդի աթոռին վրայ երկնցած, ժամանակէն առաջ խորշումած ու ձերմկցած գլուխը բարձի մը վրայ դետեղած, բացխփիկ աչքերը ձեղունին յառած գտաւ անիկա. երկայն տեգոյն ձեռքերը թիկնաթոռին թեւերուն վրայ կը հանգչէին, ու քովը սեղանի մը վրայ դրուած լամբարին լոյսը կը կրկնապատկէր իր դէմքին թալուկը :

«Մայրս, անուշ մայրս . . .» կ'մկմաց Սուրէն ու եկաւ ծնրադրել տնոր քովը :

«Ուշ մնացիր, տղաս, ջսաւ մայրը, իր կակուղ ափովը Սուրէնին ճակատը չոյելով ու մատները մազերուն մէջ խրելով :

Սուրէն երբեք չպիտի կարծեր թէ այդ ձայնը պիտի յուզէր զինքը այդքան. անգամ մըն ալ, հակառակ իր կամքին, արցունքները դուրս խուժեցին, ու մօրը ձեռքը իրեններուն մէջ առած, գլուխը անոր կուրծքին վրայ դրած, կը հեծկլտար տղու մը պէս, որբի մը պէս :

«Մայրիկս, անուշ մայրիկս . . .»

Մօրը վրդուվումը մեծ եղաւ. իր հարցումները, գորովագին ու հոգատար հարցումները, սակայն, որոշ պատասխան մը չկրցին կորզել տղուն բերնէն :

«Ձղային է, կ'ըսէր, բան մը չէ . . .»

Բայց կը խորհէր այն կսկիծին զոր իր մահը պիտի պատճառէր այդ խեղճ կնոջ :

«Ճարը չկայ, իրենց փրկութեան համար է» . կրկնեց ու կորզեց ինքզինքը մօրը գրկէն, սիրոյ այդ հանգրուանէն :

Վարը, ճաշասրահին մէջ, հայրը մինակ գտաւ, սուրճի գաւաթի մը առջև իր լրագիրը կարդալու զբաղած :

«Վա՛յ, եկա՛ր, տղա՛ս, կարծեցի որ Բերա մնացիր, կերակուրդ կ'երա՛ր» եղաւ իր պարզ ու հանդարտ դիտողութիւնը, ու շարունակեց իր ընթերցումը առանց իսկ պատասխան մը պատասխանու. նշմարեց տղուն խռովքը, աչքերուն կարմրութիւնը, շարժումներուն աւտօրինակութիւնը : Եւ Սուրէն որ օրն ի բուն

այս ժամուն պատրաստած էր ինքզինքը, բառ մը չգտաւ ըսելու. ինչո՞ւ անոր անդորութիւնը խանգարել, ինչո՞ւ այդ մարդուն գոհ երջանկութիւնը տարել. ի՞նչ անգթութիւն էր իրենը. այս մարդոց միակնպատակը եղած էր զինքը երջանիկ ընել ու իբր վարձ վիշտով պիտի փոխարինէր :

Պզտիկ աննշան մանրամասնութիւններ իրեն ուշը կը գրաւէին. նշմարեց որ հայրը կը ժպտէր իր ընթերցման պահուն. վառարանին մէջէն կրակին վիվուկը կը լսուէր յստակօրէն, ու գորգին վրայ բոցերուն ցուլացումին մէջ իրեն սիրական շունը կը կըզուրտէր փոքրիկ կատուին հետ. պատի վրայի հայելին մէկ անկիւնը, ապակիին ու շրջանակին մէջտեղը խօթում լուսանկար մը մանաւանդ հետաքրքրեց զինքը, իր իսկ պատկերն էր մէկ տա եկան հասակին մէջ, թիկնաթոռի մը զոգը, սպիտակ մուշտակի մը մէջ երկնցած էր բոլորովին մերկ, ու ժպիտ մը կը պտտէր անոր նուրբ դիմագիծներուն վրայ. ժպիտ մը, մանկական, անհոգ, յանկուցիչ. ժպիտ մը որ կարծես անամպ ու փայլուն ապագայի մը կ'ուղղուէր, ու իրենը եղած էր այդ ժպիտը, իրենը այդ անհոգութիւնը : Կրկին աչքերը ինկան հօրը դէմքին վրայ, ու զարմանալի զուգադիպութեամբ մը կարծեց ճանհալ նոյն ժպիտը հոն. ու հասկցաւ թէ երբեք քաջութիւնը չպիտի ունենար այդ ժպիտը այդ վայրկեանին անկէ վաճելու ու որոշեց գրել. գնաց ձեռքը բռնեց միայն ու համբուրեց :

«Գիշեր բարի» կ'մկմաց :

«Ապրիս, զաւակս» պատասխանեց Արոնէն էֆէնտի, աչքերը միշտ լրագրին յառած :

Սուրէն դուրս ելաւ սենեակէն հապճեպով. «Ապրիս, զաւակս» եղած էր հօրը վերջին մտղթանքը. ա՛հ, ի՞նչ հեգնութիւն կը տեսնէր հոն :

Իր անկողնին սենեակը առանձնացած՝ երկար նամակ մը շարադրեց. ինչ որ ուղած էր հօրը երգմնցնել տալ՝ հոն կը պահանջէր յուզիչ բառերով «... Պարտքս իմս է, կ'ըսէր տեղ մը, ես եմ մինակ պատասխանատուն եւ եթէ երբեք դիս սիրած էք ու կը

սիրէ՞ք՝ իմ մինակ փափաքս է որ չճանչնաք
ատիկա. եթէ մերմէ՞ք այս վերջին խնդիրքս,
վստահ եղէ՞ք որ հոգիս հանգիստ չպիտի
գտնայ երբեք...»:

Երբ նամակը աւարտեց, աւելի նանդարտ
ղգաց ինքզինքը. գոնէ քրոջը ապագան
ապահոված կ'ըլլար մասամբ: Այլ առաւօտեան
սպասել կը մնար իրեն. ուղեց իր թուղթերը
կարգի դնել, ու իր բարեկամներէն ստացած
գրութիւնները աչքէ անցուց. խռովեալ
խոստովանութիւններ, խանդաղատանքով
գրուած տողեր, յանդիմանութիւններ, գըժ-
տութիւններ, հաչտութիւններ... մէկիկ մէ-
կիկ կարգաց ու պատեց. հիմայ որ մահուան
մօտ էր, այդ ամէն փոքրիկ անձնական հա-
շիւները աննշան, նոյն իսկ ծիծաղելի կը
թուէին իրեն:

Առտուան դէմ աթոռին վրայ քունը տա-
րած էր. երբ արթնցաւ՝ արդէն իսկ բաւա-
կան ուշ էր. սովորութեանը համեմատ ժա-
մացոյցին նայեցաւ ու վարմացաւ որ դեռ
այդ ատեն տունը կը գտնուէր, բայց պատ-
ռած նամակներուն կոյտը իր նստուկ դիրքը,
յիշեցուցին իր որոշումը. թուղթերու կտոր-
ուանքը դարակին մէջ լեցուց. իր գտած
նամակը ճրագին կրթնցուց. ու հայելին
առջև գնաց պըրանքի բնաղդական վերջին
դրդումով՝ իր թուի մօրթը մօխիւրի գոյն
մը առած էր, աչքերուն մէջ արիւնի բարակ
երակներու ցանց մը տարածուած էր, ու
երկու մուշ կապտագոյն խոռոջներ փորուած
էին ակնակապիճներուն անկիւնը, չուրթնե-
րուն եզերքը ճերմակ փրփուր մը հաւաք-
ուած էր: Սանտրով մը մազերը յարդարեց,
անձեռնոցը ջուրին մէջ թաթխելով դէմքը
մաքրեց. երկայն լուացքներու պէտքը չէր
տեսներ, ու յետոյ կամաց կամաց տունէն
դուրս ելաւ. հօրը ձայնը լսեց մօրը անկող-
նին սենեակէն. քոյրը ճաշասրահին մէջ դաշ-
նակ կը զարնէր. մտաբերեց թէ հրաժեշտ
չէր առած անկէ, բայց վախնալով, որ մի'
գուցէ իր քաջութիւնը կորոնցնէ, չուղեց ա-
նոր մօտենալ:

Պատերուն տակէն կը քալէր դանդաղօրէն
դէպի ի ծով. բաղդին անիրաւութեանը վրայ

կը մտածէր միշտ. ուղեց երեւակայել թէ
չահած էր, թէ փոխանակ կորուսած ըլլալու,
պարտքի մէջ ըլլալու, հաղարհնորու տէր
եղած ըլլար. ինչէ՞ր չպիտի ընէր այն ատեն.
կրցաւ իրական բաներու պէս դիտել այն
տունը զոր պիտի գնէր, այն սենեակները
զորս պիտի կահաւորէր, այն կառքը զոր
պիտի վարէր. ու ինքզինքը տեսաւ հրամա-
յելու դիրքին մէջ, հրապուրելու դիրքին
մէջ, հիացուելու դիրքին մէջ...:

Բայց կրկին սթափեցաւ երազներէն ու
իրականութիւնը աւելի դառն երեւցաւ ու իր
վճիռը արդար. աւելի թեթեւօրէն քալեց իր
վախճանին: Եկեղեցիին առջեւէն անցած պա-
հուն խումբ մը տեսաւ որ ներս կը մտնէր ու
հետաքրքրութիւնը ունեցաւ տեսնելու թէ
իր վիճակին մէջ մէկը ի՞նչ պիտի զգար. հա-
ւատքը շատոնց կորսնցուցած էր, բայց ժա-
մերգութիւնները դեռ հրապոյր մը ունէին
իրեն համար, ու՝ առանց խոստովանիլ ու-
ղելու՝ կըզգար թէ պիտի ուղէր աղօթել,
եթէ կարենար աղօթել, որո՞ւ, ի՞նչի կամ
ինչո՞ւ համար, չպիտի կրնար ըսել, բայց ա-
ղօթել՝ խօսելու համար նոյն իսկ ինքզինքին,
լեցուն արտով չմեկնելու համար այս աշխարհ-
քէն:

Պատարագ կը մատուցուէր եկեղեցիին
մէջ. կիրակի՞ թէ տօնի օր, չկրցաւ յիշել
Սուրէն: Ժամացոյցին քովը սիւնին կազմած
մուշ անկիւնին մէջ կեցաւ. խունկի ամպեր
կը ծփային օդին մէջ. խղդրուած ձայնով քա-
հանայ մը անհասկնալի բառեր կ'արտասանէր:
Սուրէն գլուխը պատին կրթնցուց ու կրկին
ինկաւ իր խոկմանցը մէջ: Խնկաբոյր միջնո-
ւորտը, հոն տիրող կէս միթութիւնը, դպիւր-
ներուն անկարգ ու սուր երգեցողութիւնները
թմրութիւն մը պատճառեցին, ու քանիբը-
րորդ անգամ ըլլալով վերջին օրերու դէպ-
քերը վերյիշեց:

«Ինչո՞ւ լքեցիր զիս, Աստուած իմ, ին-
չո՞ւ լքեցիր զիս...» մրմռաց ակամայ ու
անգիտակցօրէն. նոյն պահուն դպրաց դասէն
բարձրացաւ ցաւատանջ, դետնաքարչ, ար-
տասութիւն «Տէր ողորմեա» մը, մինչ խորա-
նէն սարկաւաղները կը թուէին այն ամէն

յաւերը որոնց համար ըշմկութիւն կը խնդրուէր:

Այդ ամբողջ ու ցնցող երգեցութեան աղ-դեցութեան տակ մնաց ընդերկար:

Եկեղեցիէն դուրս ելաւ հրահրած այտե-րով ու սկսաւ քալել փողոցներուն մէջ դէպ ի ծովեզերքը. ինքզինքին վրայ անդադար-ձաւ ու իր մոլորումը իր ամօթալի բան մը երեւցաւ. նոր լոյս մը կ'ողողէր իր միտքը. ու չէր հասկնար թէ ինչպէ՛ս շեղած էր աշ-խատութեան լայն ու բեղմնաւոր շաւղէն... իր կացութիւնն ալ անարգեց. առաջին ճգ-նաժամին, առանց պայքարի, ուղած էր անձ-նատուր ըլլալ. այն պահուն ուր քաջութեան կը կարօտէր՝ ինք մահուան վրայ մատած էր. ճգնաժամներու բովերէն անցնելով է որ նկարագրը պիտի ամրանար, պիտի զօրանար ու բոլոր այդ ատենը ուրիշները պատասխա-նատու բռնել ջանացած էր. հիմայ կը տես-նէր թէ ամբողջ պարսաւը իրեն վրայ պէտք էր ծանրանալ և զգաց թէ աղէտը անդար-մանալի չէր: Առջի իրիկուան ծովուն վրայի տարբերու դէմ մղած պայքարը յիշեց, թէ ինչպէս փոքրիկ թեթեւ նաւակը իր տկա-րութիւնովը մէկտեղ ուժով առաջնորդողի մը կամքովը կրցած էր հասնիլ իր նպատակա-կէտին ու վատահոլութիւն մը մտաւ իր մէջը:

Իր մոլորումէն դասեր առնել, նորէն սկսիլ իր կեանքը, իր ձեռքերովը շինել կանգնել ապագայ մը, ունենալ մաքուր, բնութեան աւելի մօտ կենցաղ մը, իր պարտ-քըն՝ էր, իր իրաւունքը. զգաց թէ պէտք էր հեռանալ իր միջավայրէն, նոր երկիրներ երթալ ուր ճակատը բարձր կարենար սկսիլ փրկող աշխատութիւնները, մտածեց կոյս երկիրներու վրայ, Մատակասքար, Աւստրա-լիա, Գանատա, ուր տարբերու հետ ուղղակի շփման պիտի գար, ուր տարիներու աշխա-տութեամբ պիտի կրնար դարմանել այն վը-նասները զորոնք տուած էր հոս, և ուր տա-րիներու խիստ հսկողութեամբ մը պիտի կրնար ինքզինքին զօրաւոր նկարագրի մը կազմել, նկարագրի մը որ կարող պիտի ըլ-լար զիմադրելու արուեստական հրապոյրնե-րու, մաշեցնող սին երազանքներու, անօ-դուա տենջանքներու...:

Ամէն բանի հետ հաշտուած կը զգար հի-մայ որ կեանքի իսկական նշանակութիւնը կը մտնէր. լաթ ներդաժնութիւն մը մտաւ սրտին մէջ: Եւ հասկցաւ թէ ամէնէն մեծ սէրը զոր մարդ կրնար ցցունել ուրիշին, և առաջին պորտքը զոր տունէր մարդկութեան հանդէպ, իր «ես»ին պաշտամունքը, իր «ես»ին բարձրացումը, իր «ես»ին տղնու-ցումը պէտք էր ըլլալ ու աչքերը հեռաւոր հորիզոններու յառած, օրօրօղ հրաւերով ծո-վուն առջև, Սուրէն իր սկսելիք նոր կեան-քին համար խրոխտ որոշումներ տուաւ...:

Ե. ՇՍԻՍՏԵ

ՎԵՐՋ

ԱՂԶԿԱՆ ՄՐ ՕՐԱԳԻՐԵՆ ԲԱՂՈՒՍԾ

Մեկու օաշքի

Կը կարծես որ բան մը չունէի՝ գրելիք, երբ կ'ըսես որ կ'երեւայ թէ նիւթ չունիս: Նիւթ չունիմ... Ինչ կ'ըսես, Զարուհի, վերջապէս բան մը չէ՞ի կրնար գտնել, օրա-գիրս շարունակելով քեզի գրկելու համար. բայց խոստովանէ՛ որ քիչ մը ձանձրացուցիչ ու միօրինակ չ'ոս գտներ առօրեայ տպաւո-րութիւններս: Եւ ինչո՞ւ ալ միօրինակ ու ձանձրացուցիչ չ'ըլլան, ես որ միշտ միեւնոյն սեւեռակէտին ուղղած աչքերս, գրելիք նոյն զգացումներով ու երեւակայութեամբ, նոյն օրօրումներով, անբջանքներով, միեւնոյն յուսախաբութեամբն է որ կ'ապրիմ:

Չէ՞ մի որ ամէն օր զքեզ աւելի կը սի-րեմ, այսօր՝ երէկուընէ աւելի, ու վաղը հաւանականօրէն այսօրուընէ շատ ուժղնու-թեամբ ու տենդով պիտի սիրեմ:

Չէ՞ մի որ միշտ միեւնոյն բնութիւնն է զոր կը վայելենք, մթնոլորտը իր ոսկեաւար փաղփուռութեամբ, գիշերը՝ իր յաւիտենական առինքնող հրապոյրներով, մարդիկը իրենց տարտամ տպաւորութիւններով:

Ըսէ՛, լրագրութեան մէջ նորութեան մը կը հանդիպե՞նք, Գիտեմ, օրինակի համար, թէ այսօր ի՞նչ թխտուած է, ո՛ր նիւթին վրայ գրուած է:

Անպատճառ ըսածս կ'ըլլայ, կը վստահացնեմ քեզի:

Այս պայմաններով ա՜նշո՛ւշտ օրագիրս քիչ մը միօրինակ պիտի ըլլայ. բայց կարծեմ ասիկա այնքան զօրաւոր պատճառ մը չէ՛ որ չչարունակեմ զայն. գէթ քու սիրոյդ համար, և նոր նոր տպաւորութիւններ չփնտռեմ, չուրջս անցած դարձածներուն մէջ, գրական հարցոսկիործներու, բանավէճներու, ինքիւններու մէջ, գուարճանայու համար:

Մեր գրականութեան մէջ ամէն բան սկսած է հիմա ինծի՛ դուարձութիւն պատճառել: Ու չեմ կարծեր որ ատոր պատճառը գուարթախոհական գրութիւններէն քիչ մը չափազանց հաճոյք զգալս եղած ըլլայ:

Տրամադրութիւն չունէի՛ դրելու, ահա՛ թէ ինչո՛ւ չիրցայ շարունակել օրագիրս:

Երեքօրեայ

Amédée Rollandի սա պզտիկ քերթուածին կը հաւնիս: Ես չա՛տ հաւնած եմ, խտացումն է անիկա բոլոր ըմբռնած զաղափարներու և համոզումներու:

Penser? On peut dormir — Marcher!

on peut s'asseoir.

L'amitié? Quelle erreur! L'amour

Banal ivresse.

L'ambition! Vaut — elle une heure de paresse!

Tout en deux mots. On naît: bonjour!

On meurt: bonsoir!

Հրաշալի չե՞ս գտներ դուն: Ամբողջ կեանք մը, մտածումներու պար մը, երեւոյթներու համակ շղթայում մը, ասանկ չորս տողերու մէջ ամփոփել, խտացնել՝ այնքան յաջողութեամբ, հանրածանօթ քերթողի մը ճարտարութեամբ, որ զարմանքդ շարժել կը սկսի վերջապէս: Պէտք է խոստովանիլ որ Ռոլան միշտակ գրող մըն է:

Չորեքօրեայ

Սիւլլի—Բրիւտոմի այս տարուան բանաստեղծական մրցանակը գիտե՞ս ու՛ չհամ է, քանդակազործ է. Տիւրբիյի 28 տարեկան տաղանդաւոր աղջիկը, օրիորդ Մարթա Տիւրբիյ:

Տեսնէս ի՜նչ սիրուն աղջիկ մըն է. եւրո-

պական թերթի մը մէջ հանդիպեցայ անոր պատկերին զոր խոհալ դէմք մը անուանելու չվարանեցայ: Արդէն իր պաշտելի յանդգնութիւնն ալ կրնայ պէտք եղածին չափ շեշտել ըսածս: Երբ իր բանաստեղծութիւններու հատորը հրատարակէ որ երկու համահաւասար մասերու բաժնուած է *Idylle en fleurs* և *La voie douloureuse*, հատ մըն ալ պիտի աւելնայ անկեղծ գրագիրուհիներու այն ցանցաւ շարքին մէջ, որ գիտէ առանց կեղծիքի իր սէրերը, յուսավրիպումները, ակնկալութիւնները, սպասումի հիւստումն ու դալկութիւնը հրապարակել, առանց քաշուելու, գնահատելի աներկիւղութեամբ մը, համարձակօրէն: Մենք ա՛յնքան չենք վարժուեր անկեղծ գրականութեան որ, երբ դեռատի հայ աղջիկ մը սիրային քերթուած մը ստորագրէ, անմիջապէս կ'ամօշնենք զայն և նախապաշարունակներուն ամէնէն միամիտովը ա՜նոր վրայ կըսկօնք նորանոր երեւոյթներ փնտռել այդ միեւնոյն աղջկան: Կեանքին հետ բաղդատելու համար, որ, սակայն, այնքան անքիծ է՝ որքան ձիւնը, որքան իր չուշանաթոյր ժանեակները:

Կեղծիքը այնքան թափանցիկ է մեր միտքին ու սիրտին մէջ որ, ա՛լ սկսած ենք, փոխանակ մեր սեռին փափկութիւնն ու նրբութիւնը խորհրդանշանելու, ջրուղիներու վրայ ճառել, անոնց օգտակարութիւնը շեշտել, չոր փաստերով, Մի՛ զարմանար երբ վաղը Կօրնթացիներու գիրքը ուսումնասիրեն, ճաշօցը աշխարհաբարի վերածեն:

Եկող տարուան Սկիւտարի ամերիկեան աղջկանց վարժարանի հայ աշակերտուհիները չէ՛ որ միտյն աս ենթադրութիւնս պիտի ապացուցանեն, ուրիշ աղջիկներէ ալ կըսպասեմ:

Հինգօրեայ

Մառուդիին մէջէն կ'անցնէինք: Վայրի ծառերու, անտառներու խորհրդաւորութեանը մէջէն կ'երթայինք շարունակ, հովին ըմբոստ և անառակ փայփայանքներէն շփացած, թռչուններու գերազանցապէս հմայիչ երաժշտութեամբը արքիւռ:

Բնութիւնը այնքան աղուոր չէի գտած,

սիրելի՛ բարեկամուհիս։ Օգին մէջ բուրումնի թրթռումներ կը կարծէի զգալ, գետինին կանանչութիւնները աւելի՛ խիստ, գոյները, երանգները աւելի՛ ներդաշնակ, աւելի՛ նուրբ երազային կը գտնէի, ինքզինքս սովորականէն աւելի՛ առողջ, աւելի՛ զոհ կ'երեւակայէի։

Ահ, այդ վարկեանները չվերջանային։

Կոտորելու կուգար ժամացոյցս, որ սրտիս բաբախումներէն կարծես մտրակուած, կը քալէր արագաբար, շարունակ, անընդհատ, և երջանկութեան մը հանգրուանին պատճառած ուրախութիւններէն աւելի՛ անոր վայրկեանական հաճոյքը կը թունաւորէր, անհրապոյր նախանձոտութեամբ մը։

Կառքը կը սուրար սակայն։ Մտածո մաներս, ոսկեզօծ ու ոսկեփետուր թիթեռնիկներու պէս հովէն կը հալածուէին, զիրար կը խաչաձեւէին, և պահ մը անգութ և մռայլ բաղձանքը ունեցայ քարանալու հոգ երջանկութեան այդ սահմանին վրայ, սիրական ծնողքէս չըջապատուած, բնութեան այն հիասքանչ թարմութիւններուն, փայլունութիւններուն, մաքուր, համաչափօրէն դժուած գիւղանկարներուն խորը, օդին մէջ, այդպէս առկախ, միշտ օրօրուն, անխռով։ Չես գիտեր ինչ հաճոյք զգացի, և երջանկութեան մը զգայութենէն գինով՝ տխուր հանգրուանին աւելի՛ ո՛չ հասնելու գերագոյն ըղձանքիս մէջ, պզտիկ տղու մը պէս լացի, քանի մը վայրկեաններ լացի դողդոջուն, յուզումնաւար ու այդ արցունքներս՝ որքան երանութիւնը կեցնելու փափաքիս՝ այնքան մըն ալ, կը խոստովանիմ, քեզմէ հեռու, ամայի բլուրներու վայ, ասանկ մեռնիլ ուզելուս մտածումին համար էին։

Չկարծես որ միտքի անդորրութիւնը, ապրելու երջանկութիւնը քեզի կրնան պահ մը միտքէս հանել տալ։ Խօսք էր ըսի, կը ներես հարկաւ։

ՄԱՌԻ ԾՈՂԱՆՆԵՒՍԵԱՆ

ԿԷՍ - ԲԺՇԿԱԿԱՆ

ՄԱՐԻՈԹԵԱՆ ՊԵՏԲԸ

Յաճախ կրկնուած խօսք մըն է թէ՛ կատարեալ առողջութիւնը մեծագոյն օրհնութիւնն է, զոր մարդ կրնայ վայելել, քանի որ առանց անոր մարդ չի յաջողիր ձեռք ձգել յաջողութիւն և երջանկութիւն, իր այս երկրային կեանքին մէջ։ Այս այսպէս ըլլալով՝ զարմանալի է արդարեւ որ աւելի խնամք չենք տանիր մեր մարմիններուն։

Չափազանցութիւն չէ՛ բնաւ ըսել, թէ այս օրուան օրս՝ հազար հոգիէն մէկը կ'ատարեալ առողջութիւն չի վայելէր։ Մարկկային ազգին կէսը հիւանդ է։ Քիչեր գիտեն թէ ինչ կը նշանակէ կատարեալ առողջութիւն։ Քիչեր դարձեալ կը ճանչնան սա՛ իրողութիւնը թէ՛ կտրելի է, բացարձակապէս կարելի է ունենալ մարմին մը անանկ քաջառողջ վիճակի մէջ, որ գործնականապէս անընդունակ ըլլայ հիւանդութեան։

Այս յօդուածով պիտի մատնանշեմ այդ կ'որդի վատառողջութեան մէկ քանի շատ պարզ պատճառներ, զորս կրնանք իրապէս վերցնել մէջտեղէն, եթէ միայն քիչ մը աւելի ականջ դրուի պարզ ու պզտիկ հրահանգներու։

Վատագողջութեան կամ տկարութեան գրեթէ բոլոր պատճառները կրնանք վերագրել մաքրութեան պակասութեան։ Մարմինի մաքրութիւնը շատ երկրորդական տեղ մը միայն ունի շատերու միաբերուն մէջ։ Ու տարակոյս չիկայ թէ ատոր համար է որ շատեր՝ մարմնական մաքրութեան վրայ կը խորհին երբ ուրիշ գործ չունին, երբ ժամանակին ներէ։

Մարդկային մարմինը մաքրուելու և մաքուր պահուելու է թէ՛ ներսէն և թէ՛ դուրսէն, մարմինը պահպանելու համար գործածուած բոլոր նիւթերն ալ հայթայթուելու են մաքուր և անարատ վիճակի մէջ։

Ու նախ կրնանք ձեռք առնել օդի և արեւի խնդիրը։ Օդը ամէնէն կարեւոր պէտքն

է կենդանական կեանքի համար, քանի որ առանց անոր մահ առաջ կուգայ անմիջապէս: Շատ քիչ հոգ կը տանինք սակայն թէ՛ մեր թոքերուն մէջ մտած ոգը մաքուր է թէ ո'չ, ինախօսները կ'ըսեն մեզի թէ, մարդ սովորական պայմաններու տակ՝ կը կարօտի ժամը երեք հազար խորանարդ ոտք ոգի, որպէս զի կարենայ ապահովել չէնք շնորհք մաքուր ոգի հայթայթում մը, բայց խիստ քիչեր երբեք կը ստանան այդքան ոգ, ի բաց առեալ երբ բացօթեայ տեղերու մէջ կը գտնուին:

Յայտնի է թէ ոգի անմաքութեան և արեւի չգոյութեան լաւագոյն օրինակները պէտք է փնտռել հանրային գումարումի վայրերը: Այսպէս, անկասկած կրնանք ընդունիլ թէ՛ եկեղեցիները, թատրոնները, դպրոցները միշտ անմաքուր ոգի մթերանոցներ կը հանդիսանան: Հապա սրճարանները կա՛մ գինետունները. ասոնց ձեղունին տակ կրնաս փնտռել ուրիշ ի՛նչ որ ուզես, բայց հո՛ն մաքուր ոգ փնտռել՝ խելքէ դուրս բան մըն է: Մանաւանդ ձմեռուան եղանակին, երբ տեսնեմ մարդիկ, որոնք կծկտած, սըմքած՝ ժամերով կը գամուին իրենց տեղերը՝ սրճարաններու մէջ, չեմ կրնար հասկնալ թէ ի՛նչ կը չնչն այդ երանելիները: Սրճարանը արդէն նեղ ծակ մըն է. պատուհանները սեղմ կերպով գոցուած են, դուռը միայն երբեմն երբեմն կը բացուի բարեբաղդաբար, յետո՛ւ մնաց յաճախորդ մը ընդունելու համար, ներսի ոգին վրայ ապականութեան նոր ազդակ մըն ալ աւելցնելով: Վայրկեանի մը լուրջ խորհրդածութիւն այս նիւթին վրայ՝ բաւական պիտի ըլլայ դարմացնել մեզ՝ մարդկային ա՛յս օրինակ անմտութեան վրայ: Ասի չենթադրեր լոկ մարրութեան պակասութիւն, բայց նաեւ պարզօրէն աղտոտութիւն: Ո՛վ երբեք միտքէն պիտի անցընէր արդէն իսկ ուրիշի մը կողմէ՝ գործածուած կերակուր մը ինք ևս գործածել: Ասկէ տարբեր բան մը չէ՝ սակայն, երբ կը ներշնչենք արդէն իսկ ուրիշներէ գործածուած ոգը, որ հարկաւ այլեւս չունի իր մէջը կենսապարար յատկութիւններ:

Կենդանական կեանքի պիտոյքներուն մէջ՝ կարեւորութեան տեսակէտով առաջին տեղը կը բռնէ ոգը: Օդը և ջուրը անտարակոյս կուգան կերակուրէն շատ առաջ:

Ու քանի որ ոգի վրայ է խօսքերնիս, կ'արժէ պզտիկ ծանօթութիւն մը տալ ընդհանուր կարեւորութեան մասին: Պէտք է միտք պահել թէ՛ սովորական շնչառութեան ժամանակ, հաւասարապէս չենք լեցներ մեր թոքերը: Ու ո'չ ալ շնչատուութեան միջոցին ամբողջապէս կը պարպենք մեր թոքերուն միլիոնաւոր փամփուշտները, կը հետեւի ուրեմն թէ մասնաւոր ճիգ մը ընելու ենք որպէս զի սովորականէն աւելի քանակութեամբ մաքուր ոգ ներս առնենք երբեմն և ետքն ալ դուրս տանք: Ասոր համար, շատ աղէկ դրութիւն մըն է օրը քանի մը անգամ թոքային մասնաւոր մարդանք մը կատարել. թէ և յիտի է թէ բնութիւնը ինքը չափով մը ատոր մասին ալ կարգադրութիւն մը ըրած է, յօրանջելու և փռնգտալու. այն սովորական արարողութիւններուն շնորհիւ երբ յօրանջելու համար կը ստիպուինք յանկարծ բերաննիս բանալ կէս կանգուն և անզգալաբար ետ նետելով մարմիննիս՝ կլլել առատ մաքուր ոգ, և կա՛մ փռնգտացած ատեննիս, մէկէն ի մէկ՝ անզսպելի թափով մը մեր թոքերուն ծակը ծուկը մնացած անմաքուր ոգը դուրս թափել:

Կարեւոր հեղինակութիւն մը սա՛ կերպը կը յանձնարարէ թոքային մարդանքի համար: Շնչառութեան մասնները զօրացնելու համար՝ չրթունքդ ամուր գոցէ՛ պզտիկ բացուածք մը ձգելով մէջտեղը, ինչպէս կ'ըլլուի սուլելու ժամանակ, և այս բացուածքէն շունչ ա՛ռ կամաց կամաց՝ բայց զօրաւոր կերպով: Երբ շնչառութիւնը լմնցած կը կարծես՝ երկու կամ երեք զօրաւոր ճիգեր ևս ըրէ՛ քիչ մը աւելի շունչ ներս առնելու համար, ուսերդ կրցածիդ չափ առաջ բեր, որով և ոգը կը մտնէ թոքերուն բոլոր մասերուն մէջ: Ասոր հակառակը՝ շնչառութեան միջոցին, չրթունքը պահելով մի՛շտ նոյն վիճակին մէջ: Այս վարժութիւնը կը յանձնարարուի կատարել օրը քանի մը անգամ:

Կենդանական կեանքի պահպանումին համար երկրորդ անհրաժեշտ բանն է ջուրը, որ մարդկային մարմինին հարկւրին վաթսուներ կը ներկայացնէ: Ու նախ ջուրին արտաքին գործածութեանը մասին: Մեր մէջ սովորութիւն է բաղնիքին մէջ միայն գործածել առատ ջուր. մինչդեռ ատիկա չէ՝ ի՞նչ որ ըսել կ'ուզենք հոս ջուրի արտաքին գործածութեամբ: Այս մասին օրինակ կրնամ բերել անդլիացի քաջակազմ ուսանողները, որոնք իրենց մարմինին համար ջուր կը գործածեն ամէն օր. մենք ամէն առտու երեսնիս լուսլու վարժութիւնը ունինք. անոնք՝ ամբողջ մարմինն ջուրի ազդեցութեանը կ'ենթարկեն ամէն առտու, նոյն իսկ սառնորակ ջուրի, ձմեռուան է՛ն ցուրտ առտուները: Կ'ընդունի՞մ հարկաւ թէ պաղ ջուրի լողանքը մաքրութեան համար չէ՝ էպպէս, բայց նոյն ատեն յայտնի է թէ՝ ի՞նչքան օգտակար կ'ըլլայ այն՝ մաքրութեան տեսակէտէ ևս: Շատ աւելի ստէպ լուացուելու է մեր մորթը, որ յայտնի է թէ՝ բնախօսական կարեւոր գործառնութիւններ ունի իր կարգին: Պաղ կամ տաք, անհատին փափագած եղանակովը՝ լողանքները աւելի ստէպ կատարուելու են, առողջութեան պահպանումին համար:

Ջուրը՝ դարձեալ առատօրէն գործածուելու է մարմինին ներսէն: Մարսողական այն երկայն խողովակը որ աղիք կ'անուանուի՝ լեցուն է մի՛շտ անպէտ ու յաճախ ալ վնասակար նիւթերով, զորս մարմինէն վանելու համար ունինք դիւրամատչելի միջոց մը, ջուրը, օրհնած ջուրը: Երբ կերակուրին անպէտ կամ անմարսելի տարրերը կը մնան աղիքին մէջ՝ հո՛ն կը փախն և անկէ արտադրուած թոյներն յետոյ կը ծծուին արեան մէջ ու կը տարուին մարմինին զանազան կողմերը: Ասիկա անմաքրութիւն չէ՞ միթէ:


Ջուրը ուրեմն առատօրէն գործածուելու է նաև ներսէն: Երբեմն երբեմն վերէն վար աղիքները չնորհքով մը լուալը անպատճառ իր օգուտ երն ունի: Ասոր համար, աղէկ է սովորութիւն ընել ամէն առտու կուշտ ու կուռ մը խմել խոշոր գաւաթ մը ջուր, և նոյնը կրկնել օրը քանի անգամ որ կարելի

է, առանց ծայրայեղութեան սակայն: Միայն կարեւոր է չի շիտթել ջուրը՝ ուրիշ հեղուկներու հետ. խօսքերնիս մաքուր՝ աղբիւրի կամ անձրեւի ջուրին համար է: Մեծկակ գրեխով մը մերթ ընդ մերթ աղիքին վարի մասը լուալը մեծ օգուտ ունի անտարակոյս: Դիւրի ցաւերէն շատերը, մարմնական անհանգստութիւններէն ումանք կը դադրին յաճախ այս պարզ լուացումովը:

Վերջացնելով ուրեմն, կը յորդորենք իրենց մարմինի առողջութիւնը փնտռողները, նախանձաւոր ըլլալ մաքրութեան, և մանաւանդ օդի և ջուրի միջոցով ձեռք բերուած մաքրութեան, այն վստահութեամբ թէ՝ առողջապահութեան մէջ առաջին տեղը կը բռնէ մաքրութեան պէտքը:

ՏՈՔՅ. ՅՈՎՍ. Տ. ՍՏԵՓԱՆԵԱՆ

ԲՆՔՆԱՆՈՒԹՅՈՒՄ



Քեզի՛ կուտամ ամէն բան,
Քու պաշտումիդ փոխարէն,
Սիրտս իր տենդոտ, անսահման
Բաքախումբովն համօրէն:

Քեզի՛ հաւատքս սրբալից,
Խոստումներովն իր մաքուր,
Կա՛մքս ալ քեզի, պաշտելիս,
Մէկ նայուածքիդ տրիտուր:

Հոգիս իրեն յոյզքերով,
Քեզի՛ կուտամ ամէն ժամ,
Երազներս ալ օրերով
Քու կնիքն ըրդ թող ըլլան:

Ինչ որ ունիմ սիրական,
Հընարք կամ ձիրք, կամ անորջ,
Բոլորն ուզէ՛ք քեզի՛ տա՛մ,
Նոյնիսկ կիրքերս հըրաշունչ:

Բայց մի՛ միայն սիրակէզ
Աչքերս ինծի շընորհէ,
Որ կարենամ վայել քեզ,
Տարփանքներովս փրփուրէ:

Մ. Ա. ՊԱՐԱՍՄԵԱՆ

ՏՊԱՒՈՐՈՒԹԻՒՆՆԵՐ

(Կ՝ Ս՝ ԻԹԻԻՃԵԱՆԻ ՄԱՀՈՒԱՆ ԱՌԹԻԻ)

Ս.

— Մասիսը մեռե՛ր է...

Այս եղաւ առաջին փոփոխութիւնը զոր լսեցի զբան մը բացուածքին մէջ կեցող երկու կիներու բերնէն, երբ կիրակի գիշեր, արագ քայլերով, կ'իջնէի Յովհաննիսիկ երեւոյն եկեղեցիին փողոցն ի վար, գոյժը ինձ հասնելուն պէս՝ Կ'երեւայ թէ, Իւթիւճեանէ Գ. ի բնակած թաղին մէջ, դեռ զինքը իր լրագրին անունով ճանչցողներ կային, ինչպէս ատենօք, — իր գործօն լրագրապետութեան միջոցին, — Կ'ըսեն եղեր զինքը նշմարելնուն պէս.

— Մասիսը կուգայ կոր...

Ու քանի մը քայլ անդին, իր զբան առջև, դադարէր դիմաւորեցի. զոր մեռելակառք կը դնէին՝ եկեղեցի փոխադրելու համար գիշերանց։ Թէև ութսունամեայ ծերունի մըն էր մեկնողը, բայց ցնցող, յուզիչ բան մը կար ինծի համար այդ մեկնումին մէջ. ու մինչ վերը՝ կ'իսն ու զաւակները կուլային, ես արձանացած կը մնայի վարը, մութին մէջ, այն մարմարէ սեմին վրայ ուր այսքան տարիէ ի վեր, շատ իրիկուն պատահած էի իրեն, մէկ ձեռքով գաւազանին կռթնած, կրկնակ ակնոցները աչքին, ցից հասակովը որ երբեք չկրէցաւ, ու յա՛ իտենական հեգնոտ ժպիտը դէմքին վրայ։ Եթէ ուշ ըլլար ժամանակը, վեր կ'ելլէինք խօսակցելու. իսկ եթէ կանուխ՝ մէկտեղ ճամբայ կ'իյնա. ինք պտոյտ մը կատարելու թագսիմին կողմը։ Քալելը շատ չէր սիրեր, տկար ըլլալուն ու շատ յոգնելուն համար։ Ի դուր կըստիպէի զինքը որ Լիւքսեմպուրկ կամ Սըլաւոփոտ երթանք, հանգստաւէտ տեղ մը. ինք նախամեծար կը սեպէր՝ պղտիկ սրճարանի մը մէկ անկիւնը, ուր կ'ըլլակը պատրաստած կը բերէին իրեն՝ մասնաւոր յարգանքով մը, թէ՛ ի պատիւ ծերութեանը և թէ՛ դազեքանի ըլլալուն, ինչպէս ճանչցուած

էր այնտեղի Յոյներէն ալ. Պատուհանին առջև, ուր կը նստէր, ռահանի թաղարներ շարել կուտար, անցորդներէն չի տեսնուելու համար, վասն զի՝ վերջերս մանաւանդ՝ իրապէս յափրացած մը, տաղտկացած մըն էր կեանքէն, ու տեսակցութիւններէ իսկ խոյս կուտար։ Հիւանդութիւնը մէկ կողմէն, որ կը կրծէր զինքը ներքնապէս, և ուղածին պէս ուտելու, պտտելու, աշխատելու բժշկական արգելքները միւս կողմէն, տխուր ու մեղամաղձոտ դարձուցած էին զինքը։

Ասով հանդերձ, մտերմական տեսակցութեանց մէջ որոնցմէ կ'ախորժէր, զուարթութեան հետք մը կը պահէր, մարելու մօտ եղող կանթեղին վերջին պլպլուքներուն պէս։ Ու միշտ նոյն Իւթիւճեանն էր, սրամիտ ու սրախօս, մա՛րդէպերով լեցուն խօսակցութեամբ, քառասուն-յիսուն տարուան համակրանքներն ու հակակրանքներն անփոփոխ պահած՝ մեռած մարդերու նկատմամբ, որոնց հետ գրչի հակառակորդ կամ գաղափարակից եղած էր ժամանակաւ։

Թագսիմի այդ հանդարտիկ սրճարանին անկիւնը, ուր երբեմն մէյ մէկ փոքրիկ գաւաթ օղի կ'ոգեւորէին մեր խօսակցութիւնները, ինչքան հին անցքերու և անձերու վրայ յատկանշական բաներ պատմած է զորս նոթագրած չըլլալուս կը զղջամ այսօր։ Ի դուր կը փորձէի համոզել զինքը որ շարունակէ գրել իր անձնական յիշատակները, ինքնակենսագրութիւնը, զոր 1890ի Մասիսներուն մէջ սկսաւ ու ընդհատեց։

— Ի՞նչ հարկ, կ'ըսէր, միթէ իմ գրելիքներս այլեւս չահեկանութիւն մը կ'ընա՞ն ունենալ։

Ու անդդուելի մնաց՝ գրիչը ձգելու ուրոշմանը մէջ։ Հազիւ, 1900ին 1903, յաջողեցայ քանի մը յօդուած առնել իրմէն, օրուան նիւթի մը վրայ որ անցեալին հետ առնչութիւն ունենար. — «Զեմ խօստանար, տեսնեմ» կ'ըսէր. բայց լրագրապետի ոգին մեռած չէր իր մէջը ու տպարանին ձեռագիր հասցնելու կարեւորութիւնը աղէկ գիտէր։ Նոյն գիշերն իսկ կը նստէր կը գրէր, ու առաւօտուն, զիս իր դէմը տեսնելով,

կանուխէն, սքողուած գոհունակութեան չեղ-
տով մը — «Գիշերը քունդ չի տարա՛ւ» կը
հարցնէր: Ու, մութ կանանչ գոյն երկար
մուշտակին ծոցէն հանելով համաչափ թուղ-
թերու վրայ՝ կոկիկ, մաքուր գրերով գրուած
յօդուածը, վարանոտ ձեռքով մը կը կար
կառէր, ըսել ուզելով կարծես «Աւելի աղէկ
է որ չի տպուի»: Բայց ես գրպանած կ'ըլ-
լայի արդէն ձեռագիրը:

— Փորձերուն ուշադրութիւն ըրէք, կ'ա-
ղաչեմ, կը կրկնէր, ոճէս, ուղղագրութե-
նէս, կէտադրութիւններէս բան մը չի փոխ-
ուի... նոր աշխարհաբարի վերածուելու
համար:

Աւելորդ է ըսել թէ իր կտմբը կը յար-
գուէր: Քանի մը անգամներ փափկութեամբ
և կէս-կատակով փորձեցի համոզել զինքը՝
իւրերը իրի և մ'էն մըն էի վերածելու:
Անդրդուելի մնաց:

Նոր գրողները, մանաւանդ «նորագոյն-
ները» գրեթէ չէր ճանչնար անձամբ. բայց
կը հետաքրքրուէր անոնցմէ յաջողակներուն
գրուածքներովը, — բաց ի բանաստեղծու-
թիւններէն, վասն զի Իւթիւճեան երբեք
չէր խօսեր, կարծիք չէր յայտնէր ոտանաւորի
վրայ: Արձակին՝ շատ նախանձախնդիր էր,
ընդհակառակը: Երբ Օննիկ Զրփթէ — Սարաֆ
առաջին անգամ երևցաւ Մասիսի մէջ, —
թո՛ղ ներէ բարեկամս և աշխատակիցս որ
ըսեմ այսօր, — իր «վարուելակերպ»ը, «գը-
րելակերպ»ը բաւական քրտինք թափել տուին
ինծի՝ Իւթիւճեան էֆ.ի աւջև, որ իր լեզ-
ուազանի բծախնդրութեանը մէջ պարզապէս
գայթակղած էր այս նորաստեղծ բառերէն,
ու զիս տեսնելուն՝ դիտողութեանց տարափ
մը կը տեղացնէր գլխուս: Զի կրնալով իր
հետ վիճաբանիլ հայկաբանութեան մասին,
միշտ առանձն կ'անցունէի, իբր մեղմացուցիչ
պարագայ, երիտասարդ գրագէտին գըր-
ուածքներուն գեղեցկութիւնը որուն համա-
միտ էր: Բայց, ատեն ատեն չէր մոռնար
սահեցնելու սա հարցումը — «Այս շաբթու
ինչեղակերպ նիւթեր ունիսնայինք Մասիսին
մէջ»: Քիչ մը կը խնդայինք, ու կը մոռ-
ցուէր կերթար: Այն օրը, սակայն, ուր Զրփ-

թէ — Սարաֆ Մասիսի մէջ հրատարակեց,
«Ճակատագրային Տռամներ»-ու շարքին, կոյր
փաստաշանին կեանքն ու պատմութիւնը,
որ իրական կեանքէ անոնուած սքանչելի էջ
մըն էր, Իւթիւճեան անխառն գնահատում
մը յայտնեց. ու այնուհետև, այլևս որ և է՝
դիտողութիւն չըրաւ երիտասարդ գրագէտին
բառերուն նկատմամբ որոնք, իրենց տիրոջ
ղրական յաջողութեան շնորհիւ, քաղաքա-
ցիի իրաւունք ստացած էին:

Լեզուականին չափ՝ նախանձախնդիր էր
նաև կրօնային, հնախօսական, բանասիրա-
կան նիւթերու մասին, իր կատարեալ ձե-
ռնհասութեամբը: Ու շատ անգամ, այդ
նիւթերուն վրայ որ և է թերթի մէջ գրուած-
քի մը մասին բերանացի քննադատութիւն-
ներ կ'ընէր որոնք հրատարակուելով՝ բա-
ւական աղմուկ պիտի հանէին. բայց չէր
գրեր, կապածելով որ գուցէ ծերութիւնը
և դողդուղուն մատները լիովին չ'արտայայ-
տէին իր միաքն ու գաղափարները: Եւ այս
առիթներով, մէկէ աւելի շահեկան դրուագ-
ներ կը պատմէր իր երիտասարդութեան և
հասուն տարիքին մէջ ունեցած լրագրական
բանակիւններէն:

1902ի սկիզբները, Մասիսի ծերունի ար-
տօնատէրը մտաւորական ու մարմնական վեր-
կենդանացում մը ունեցաւ, — եթէ կարելի է
այսպէս ըսել, — իմանալով որ իր և իր թեր-
թին յիսնամեայ յորելեանը տօնելու խորհուրդ
մը յղացուած է: Լուրը արձագանգ գտաւ
լրագրութեան մէջ, և բարձրաստիճան եկե-
ղեցականներ, գրական անձնաւորութիւններ,
ստորագրեցին գիր մը որով Պատրիարքա-
րանի արտօնութիւնը կը խնդրուէր: Պատ-
րիարք Սրբազանը խօստացաւ նախագահել
ու կեդր. վարչութիւնն ալ իր համամտու-
թիւնն յայտնելով, արձանագրեց իր որոշ-
մանց կարգին մէջ: Այդ միջոցին էր որ,
Յովհաննէս Ալան, — ինքն ալ Հիւանդանոցի
մը մէջ հիմակ, աւաղ, — առանձին գրքոյ-
կով մը հրատարակեց Իւթիւճեանին կենսագ-
րութիւնը, մինչ Մասիսի մէջ, Գր. Զօհրապ
և Ռ. Յ. Պէրպէրեան՝ համակրական յօդուածներ
կը նուիրէին Իւթիւճեանին գրական գործու-

նէութեան և Մասիսին յիմնամեայ գոյութեան նշանակութեանը՝ մեր մտաւորական կեանքին մէջ :

Մարդ որչափ համեստ ըլլայ ու պարզաւոր, հրապարակային յարգանքի ու համակրանքի այս տեսակ արտայայտութեանց առջև չի կրնար անտարբեր գտնուիլ : Եւ կարապետ Իւթիւճեան խորապէս զգածուած կ'երեւար : Խօսուածքին, քալուածքին, շարժուածքին մէջ առուգութիւն մը կընդնշմարուէին : Բարեկամներ արդէն իսկ կը շնորհաւորէին զինքը : Ես ինքս ալ, իրրեւ իր թերթին խմբագիրը ու վարիչը, իրեն հետ մասնակից էի այս illusionին, որ չիրականացաւ սակայն : Համամտութիւնը ընդհանուր էր, բայց գործադրութեանը համար՝ լայն ժամանակի տէր և աշխատելու միջոց ունեցող անձերու պէտք կար, որոնք կը պահէին : Ու յորեւեանին գաղափարը մնաց տեսական վիճակի մէջ, կամաց կամաց մոռցուելով. այս մոռացումը խորապէս ազդեց Իւթիւճեանին վրայ, որ իր յափրացածի, կեանքէն զգուած մարդու տխրութեանը մէջ խորատուգուեցաւ նորէն :
Տ. Ա.

ԽՄԱՌԱՌԱՆԱՆ ՆՕՐՆԵՐ

Ս. Պատրիարքը չորեքշաբթի առաւօտ ներկայ գտնուելէ ետքը Կեդր. Վարժարանի ուսումնաւարտ կարգին իրաւաբանական քննութեանց, որոնք յաջող արդիւնքներ ցոյց տուին, գնաց նախագահել Կէտիկ — Փաշայի մանկապարտէզի հանդէսին : Ն. Սրբազնութիւնը ուրբաթ օրն ալ նախագահեց Պէդճեան և Լուսաւորչեան վարժարաններու ամառնալսողի հանդէսին, և այս իրիկուն Սկիւտար կերթայ, Թաղ. Խորհուրդին հրաւերով, վաղն առաւօտ պատարագ մատուցանելու Ս. Կարապետ եկեղեցին որուն տօնախմբութիւնն է : Վարդապետի առթիւ :

Իզմիրէ հասած տեղեկութեանց նայելով, Գուրեան Սրբազան՝ իրեն եղած դիմումի մը ի պատասխան՝ պատրաստակամութիւն յայտնեց է. ընդունելու Իզմիրի առաջնորդութիւնը, եթէ ընտրուի : Եւ արդէն, հաւա-

նական կ'երեւի, որ տեղւոյն Գաւառ. Ժողովը իր քուէները պիտի միացնէ Գաղիկանքին արժանաւոր վերատեսչին վրայ որ յարմարագոյն ընտրելին է :

Երուսաղեմի քննիչ — պատուիրակ Գէորգ էֆ. Ասլանեան Պէրութի մէջ հանդիպել է Կարապետ էֆ. Խաչատուրեանի որ թէև ուղեր է յանձնել Պատրիարքարանի յանձնարարականներն ու հրահանգները, բայց Ասլանեան էֆ. անդրդո ելի մնացել է իր հրաժարականին վրայ և ճամբայ ելել է Ղէպի կ. Պոլիս : Իսկ Խաչատուրեան էֆ. շարունակել է իր ուղեւորութիւնը Ղէպի Երուսաղէմ ուր պիտի սպասէ Պատրիարքարանի հրահանգին : Պէոյիւֆսէրէի Թաղ. Խորհուրդին կարգադրութեամբ՝ վաղն առաւօտ պատարագ պիտի մատուցուի գիւղին եկեղեցին, հանգուցեալ Միքայէլ էֆ. Յակոբեանի հոգւոյն համար և հոգեհանգստեան պաշտօն պիտի կատարուի :

Մեքիան Էմ. Մախարեան, Կէտիկ — Փաշայի Հայ — Աւետարանական մատրան քարոզիչը, չորեքշաբթի օրը Շիշլիի ազգ. գերեզմանատան մէջ դամբանական մը խօսեցաւ Կարապետ էֆ. Իւթիւճեանի դազաղը հող իջուցուած պահուն և յարգանք մատոյց հանգուցելոյն յիշատակին : Մախարեան էֆ. Մասիսի արտօնատէրը ճանչցած էր կրթական տեսչութեան թուականին, երբ ինքն ալ ուսուցիչ էր Բերայի Նարեկեան վարժարանին մէջ :

ԱՄՈՒՍՆՈՒԹԻՒՆ

Գո՛ իաէն հարսանեկան սիրուն քառթ մը ստացանք որ կը հաղորդէ մեզ՝ Յակոբ էֆ. Սայապալեանի ամուսնութիւնը Օր. Ագապի Կիւլպէնկեանի հետ : Ներքի անխորհրդապահութիւն մը գործած պիտի ըլլանք, յայտնելով թէ Սայապալեան էֆ. ն մեր համակրելի աշխատակիցը «Փայլակն» է որուն փափուկ գրուածքները հաճոյքով կարդացուած են միշտ, և Օր. Կիւլպէնկեան ալ բոլորովին օտար մը չէ գրական ու բանաստեղծական ճիւղերուն : Մեր շնորհաւորութիւնները կուղղենք համակրելի ամուլին :

ԱՐԺԱՆԻՈՐ ՄԵԾԱՐԱՆՔ

ՄԻԲԱՅԷԼ ԷՖ. ՅԱԿՈԲԱՆԻ ՅԻՇԱՏԱԿԻՆ

Բարեյիշատակ Միքայէլ Էֆ. Յակոբեանի մահուան քառասնօրէին առթիւ, անցնալ կիրակի առաւօտ Պատր. Փոխանորդ Տ. Գաբրիէլ Սրբազան պատարագ մատոյց Սամաթիոյ Ս. Գէորգ եկեղեցւոյն մէջ, հանգուցելոյն ընտանեաց փափագանօք: Դասին մէջ սգակիր կեցած էին Գրիգոր Էֆ. Մ. Յակոբեան, Տ. և Տիկին Սիմոն Գայսէրլեան, ազգականներէ ու բարեկամներէ չըջապատեալ: Եկեղեցին լեցուած էր ժողովրդեան խուռն բաղմութեամբ: Պատարագիչ Սրբազանը քարոզ մը խօսելով, թուեց Միքայէլ Էֆ. ի առաստձեռն բարիքները՝ եկեղեցական ու մարդասիրական հաստատութեանց, և մասնաւորապէս Սամաթիոյ եկեղեցւոյն, վարժարանին ու թաղին աղքատներուն, որոնք իրենց երախտագիտութիւնն յայտնեցին՝ զրկաբաց ընդունելով հանգուցելոյն մարմինը Ս. Գէորգ եկեղեցւոյ բակին մէջ ուր թաղուած է: Պատարագէն ետքը հոգեհանգիստ կատարուեցաւ թէ՛ եկեղեցիին մէջ և թէ՛ հանգուցելոյն գերեզմանին վրայ որուն ծաղկեպսակներ նուիրած էին այրի Տիկին Տիրուհի Մ. Յակոբեան, Դր. Էֆ. Յակոբեան, Տ. և Տիկին Ս. Գայսէրլեան: Այրի Տիկին Մ. Յակոբեան և Տ. և Տիկին Ս. Գայսէրլեան 10ական ոսկի նսւիրեցին Սամաթիոյ Աղքատախնամին, իսկ Գրիգոր Էֆ. կարեւոր գումար մը նուիրեց եկեղեցւոյն, քահանաներուն, դպրաց դասին և այլն, ի յիշատակ իր ողբացեալ հօր:

Նոյն օրը, կիրակի՝ 27 յունիս, Ազգ. Հիւանդանոցի Հոգաբարձութիւնն ևս արժանաւոր յարգանք մը ընծայեց Միքայէլ Էֆ. Յակոբեանի յիշատակին, հրաւիրելով Կրօն. ժողովոյ ատենապետ Տ. Գրիգորիս Սրբազանը պատարագ մատուցանել Ս. Փրկչի մատուան մէջ ուր ներկայ էին Հոգաբարձութեան ատենապետ Վսեմ. Պատրիկ Էֆ. Կիւլպէնկեան՝ իր անդամակիցներով և ուրիշ ծանօթ անձնաւորութիւնք: Պատարագիչ Սրբազանը քարոզ խօսելով, թուեց հանգուցելոյն բարեարութիւնները, մասնաւորապէս Հիւան-

դանոցին մատուցած բարոյական և նիւթական մեծ ծառայութիւնները: Պատարագէն և Հոգեհանգիստէն ետք, ներկաները այցելեցին Հիւանդանոցին զանազան յարկերը ուր անգամ մըն ալ օրհնուեցաւ Միքայէլ Էֆ. ի յիշատակը:

Մանչէսթըրի Հայոց եկեղեցիին մէջ, ինչպէս նաև Արմաշի Զարիսափան Ս. Աստուածածնայ տաճարին մէջ պատարագ և հոգեհանգիստ մատուցուեց եւ ի յիշատակ Յակոբեան Միքայէլ Էֆ. ի:

Հանգուցեալ Կարապետ Էֆ. Իւթիւճեանի վաղեմի բարեկամը՝ Վսեմ. Տօքթ. Նաֆիլեան փաշա, ինչպէս շատ տարիներէ ի վեր, նոյնպէս այս անգամ մեծ անձնութեամբ դարմանած էր զինքը, ժամերով միայնով ծերունի հիւանդին սնարին մօտ, յուսադրելով զինքը և միսիթարելով ընտանիքը՝ աղետալի վախճանէն ետքը: Յարգելի բժշկին այս անկեղծ բարեացակամութիւնը չնորհակալութեան արտայայտութիւններով կ'արձանագրենք, այս առթիւ թարգման կանգնելով հանգուցելոյն ընտանեաց զգացումներուն:

ՀԱՅՈՒՆԵԱՅ ՎԱՐՓԱՐԱՆ

ԱՏԱԲԱԶԱՐ

Վարժարանիս յառաջիկայ տարեյիջանը պիտի սկսի Սեպտ. 2/15ին, Ել. առաւօտ: Դիշերօթիկներու տարեթոյակն է 12 օտ. ոսկի, որուն կէսը պէտք է վճարել Սեպտ. մէջ, և կէսը Յունուարի մէջ: Ծառաթը դաշնակի մէկ դասի համար տարեկան 3 օտ. ոսկի աւելի կը պահանջուի: Երգեհոնի դաս առնողները տարին 1ուկէս ոսկի աւելի կը վճարեն:

Վարժարանին յայտագիրը ուղղորդներուն ճրի կը զրկուի: Ուրիշ տեղեկութեանց համար դիմել Մր. Բիթի, Պայպըլ—Հատւս, Կ. Պոլիս, կամ զրել Տօքթ. Ս. Էֆ. Գալալճեանի, ատենապետ խնամակալութեան, Ատաբազար:

1—8

Հիմնադիր—Արսոնաեք Կ. Ս. Իիթիիճնս Պատարագաւոր—Տօքթ. ՏՈՔԹ. ԵԴ. ՄԱՍԻՍ

Տպագրութիւն ԱՐԵՆՍԻՔ Օրագրի